



ՏՆՕՐԷՆ ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

• ՏԱՐԻ ԹԻԻ 6

ՀԱՅԿԱԲԱԹԵՐԹ

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԱՊՂՅԵՍՏՈՒՄԻ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՂՅԵՍՏՈՒՄԻ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գաղա, Օռնդտի-Պաք հաստատութեան շէնք, թիւ 16

(آ. آسادریان) شرکت مطبوعه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۱۶

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՆՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութիւն 52

Հատր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
և կը գտնուին

Անկարելի է որ դնանք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անխիւ և անհամար շառաւորութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ դիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՕ. ՊԱԼԱՅԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեան,
հաստատունը եւ դիւրագործելին. ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառանք մէջ:

ՊՐԵՏԵԼՔ ՕՐԱՆՔ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | Չարշը Պօյաւ, թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու քոչոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
գ 43 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆՔ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 լրշ. վեցամսեայ 45 լրշ. գա-
ւառներու համար տարեկան 108 լրշ. վեց-
ամսեայ 60 լրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւր փաւրա: ԱՐԵԻԵԼՔ
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբ-
ագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊՍՏ-
ԿԵՐԱՋԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բայ ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խմբ-
ագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

ՀԱՐԱՐ

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԿՏԱՆԻ ԹԷ ԿԱՏԱԿ

Տեսէ՛ք թէ սա երկու բառերուն մէջ ալք մը միայն ի՞նչ մեծ փոփոխութիւն մը, ի՞նչ կարեւոր յեղաշրջում մը յառաջ կը բերէ :

Այբուբէնին սա առաջին տառը՝ հաւատա-
ցէ՛ք թէ մեծ դեր կը խաղայ այն մեծ կամ
պզտիկ նուիրատուութեանց մէջ, զորս կը
կտակուին այս կամ այն բարերարին կողմանէ :

Մեր մէջ, հինէն մինչեւ այսօր, չեն պակ-
սած այնպիսի անձնաւորութիւններ՝ որոնք
իրենց ապրած միջոցին ետ չկենալով հան-
դերձ ինչ ինչ բարենպատակ հաստատութեանց
նուէրներ հասցնելէ, իրենց մահուընէն վեր-
ջըն ալ որպէս զի շարունակուին այդ բա-
րիքները, դրամական մեծ մեծ գումարներ
կը կտակեն, և այսպէսով իրենց բարերարի
անունը կանամահանայ կը յիշուի և անչնչելի
կը մնայ եկեղեցական և ալ բարենպատակ
հաստատութեանց տոմարներուն մէջ :

Մեր նախնիք, անոնք որ բարեկեցիկ վի-
ճակ մը ունէին, ետ կեցած չեն այսպիսի

վաւերական նուիրատուութիւններէ և գրեթէ
շատ քիչեր միայն բացառութիւն կը կազ-
մեն :

Ամէն կտակ իր նպատակը ունի : Մէկը որ
իր ողջութեանը ո՛ր եւ է գումար մը, կալ-
ուած մը և կամ եկամուտ մը կը կտակէ ե-
կեղեցիին, Հիւանդանոցին և կամ վարժա-
րանի մը, կը փափաքի որ, կա՛մ իր անունը
յիշուի իբր բարեգործ նուիրատու, և կամ
թէ իր հոգուն համար տարին մէկ երկու ան-
գամ պատարագ մատուցուի այն եկեղեցւոյն
մէջ՝ որուն կտակած է ո՛ր եւ է գումար մը և
կամ կալուած մը :

Սակայն պարագան որ զմեզ կտտի զէ նիւթ
ընել այս խնդիրը, սա է որ, հին կտակները
սկսած են կորսնցնել իրենց ալքը, այսինքն
թէ՛ հին կտակները կատակներու փոխուած
են այսօր :

Պէշիկթաշի Ս. Աստուածածնայ եկեղեցին
որ կառուցուած է ՄԻՄԻԱՅՆ լուսահոգի կա-

բաղկատ խալֆա ամիրային անձնական ծաղ-
քովը, և որուն կալուածներէն շատերը նոյն
ամիրային նուէրներն են, այսօր քիչ մը քիչ
զարմանքով չէ որ կը տեսնուի թէ՛ անոր
հոգւոյն ատեն ատեն եղած պատարագները
կամ քահանայ մը կը կատարէ և կամ զանց
կառնուի՝ բնաւ չի յիշուելով իսկ անունը:

Երկրորդ՝ Գում-գաթուի դուրսի եկեղեց-
ւոյն բակը հանգչող Գէորգ ամիրա փափագ-
եանի կտակը:

Գէորգ Ամիրան իր ողջութեանը եկեղեց-
ւոյն հիմնական նորոգութեան և դէմի վար-
ժարանին շէնքին շինութեան, ինչպէս նաեւ
կալուած մըն ալ նուիրուելու գործին մէջ
այն ատեն աշխատած, պէտք եղածը ըրած
և իբր բարերար ճանչցուած ըլլալով հանդերձ
այսօր զարմանալի է որ տարին երկու անգամ
հոգուն համար — ըստ կտակագրին — որոշ-
ուած պատարագները երբեմն մէկի, և եր-
բեմն ալ բնաւ չի կատարուելու դատապար-
տուած են:

Ինչո՞ւ:

Իրաւ է թէ առածը կ'ըսէ. «անցուկը
մոռցուկ կ'ըլլայ», բայց այս կարգի կարե-
ւոր կտակներուն համար ըլլալու չէ ըստ իս
այս խօսքը:

Մենք սովոր ենք միշտ նորը փառաբա-
նելու, միշտ կենդանի բարերարները յիշելու
և զանոնք միայն ովսանաններով գովաբա-
նելու, առանց միտք բերելու թէ՛ ժամանա-
կին եղած են, գտնուած են բարերարներ ալ՝
որոնք հիմակուանին տասնապատիկը բարիք-
ներ ընելով հանդերձ՝ այսօր մոռացման մատ-
նուած են, անչքացած ու բոլորովին մէկ
կողմ ձգուած:

Գեռ այս տարուան ընդարձակ օրացոյցին
մէջ, ուր նշանակուած էին հին դէմքերը,
և որոնց մէջ չպիտոյ անուններ չէին պակսէր,
ահա այդ ցուցակին մէջ ոչ իսկ յիշատակու-
թիւնը եղած էր Կարապետ Ամիրային, իբր
եկեղեցաշէն և մեծ բարերար, ոչ ալ Գէորգ
Ամիրային, որ կարեւոր ծախքերով Գում-
գաթուի դուրսի եկեղեցին նորոգած, վար-
ժարանը շինած ու անոր ալ կարեւոր կալ-
ուած մը նուիրած է:

Այս տգեղ պարագան յիշելով՝ ըսել չենք
ուզեր թէ՛ անպատճառ այդ կտակները պէտք է

գործադրուած ըլլան և կամ պէտք է գործադ-
րուին, քանի որ այդ չէ մեր ըսել ուզածը,
այլ՝ զգուշացնել Պատ. Թաղ. Խորհուրդները
որպէս զի իրենց այդ թոյլ ընթացքով պատ-
ճառ չըլլան ուրիշ նուիրատուներու բարե-
նպատակ կտակներուն, քանի որ անոնք սեւ-
նելով թէ իրենցմէ առաջուան կտակները
ճիշդ ու ճիշդ չեն գործադրուիր, չըլլայ որ
եւ կենան և եկեղեցիները, ինչպէս նաեւ ու-
րիշ բարենպատակ հաստատութիւններ՝ տու-
ժեն այս կերպով:

Կտակները՝ կտակ չեն պէտք է ըսել,
զանոնք հաստատողը՝ անշուշտ մտածած և
պէտք եղած ծախքերը նախապէս որոշած ու
հաստատած է, ուստի պէտք է և անհրաժեշտ,
գործադրել անոնց պարունակութիւնը յօդ-
ուած առ յօդուած, և ասիկայ եթէ ի յար-
գանս կտակակատարին է, քիչ մը և աւելին՝
օրինակ նորերուն:

Ինչ եռանդով և ճշդապահութեամբ որ կը
վերաբերուինք օրուան կտակներուն հանդէպ,
նոյնչափ և աւելին պէտք է յարգենք հիւսիսը,
մոռացման և զանցառութեան չի մատնելով
զանոնք, և հաւ արդիւնքը կրկին մեզի նը-
պաստաւոր պիտի ըլլայ, և օր օրի նոր կը-
տակներ ողջունելու, զնահատելու առիթն ու
պատիւը պիտի ունենանք:

Գովել ներկաները՝ յարգել անցեալները,
ահա օրէնքը և պատշաճութիւնը:

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

Յ. Գ. — Այս յօդուածը շարուած էր ար-
դէն երբ սրտի մեծ հաճոյքով կարդացինք
ծանուցումը Գում-գաթուի դրսի Պատ. Թաղ.
Խորհուրդին, որոնք աղնուութիւնը ունեցեր
են՝ փափագեան Գէորգ ամիրայի հոգւոյն հա-
մար պատարագ մատուցանել տալ անցեալ
կիրակի:

Երանի թէ այս պարտաճանաչութիւնը
տարին երկու անգամ կրկնուէր ըստ տրա-
մադրութեան կտակին, և մենք առաջինը
ըլլայինք ծափահարող Պատ. Թաղ. Խորհուր-
դը իբրեւ գործադրիչ այդ կարգի կտակներու:

Գալով Կարապետ Ամիրային, թէեւ այդ
տիպար անձնաւորութիւնը ո՛ր եւ է կտակ չէ
ըրած պատարագի համար, բայց չարժէք մի-
թէ իբր եկեղեցաշէն բարերար՝ զոնէ տարին
մէկ անգամ կանոնաւորապէս պատարագ մա-
տուցանել ի հանգիստ հոգւոյն մեծանուն բա-
րերարին:

ՆՈՅՆ

Թ Ե Ո Ղ Ի Կ

Դրագէտ մը, որ կրնար լաւ portraitiste մը կամ paysagiste մ'ըլլալ: Իր գործիքը մեր գիտցած հասարակ գոտաքը չէ, ինչպէս պիտի բերուէինք կարծել, իր ճանչնոր դէմքերու շատ շուտ ընդհատուած շարքերուն վերահագրէն դատելով: Իր «Ճանչնոր Դէմքեր»ը կը կրեն Gainsboroughի մը ջրուտ նկարչութիւնը, ուր իւրաքանչիւր գիծ իմաստ մ'ունի, և իւրաքանչիւր գոյն հմայք մը: Իր վայրկեանկարները՝ ենթակային հոգեբանութեան ճշգրտորէն խառնելու համադրութիւններն են, կամ լաւ եւս instantanéներ, Շարթրանի կողմէ ըրթուշ եղած և ստորագրուած:

Իբր գրական դէմք, anomalie մըն է: Դրաբարի մէջ ծնած և ռամկային գրականութեան մէջ ծիլ արձակած տունկ մը: Հին հայերէնի հիւթը լաւ մը քամելէ վերջ՝ յանկարծ մէկ ծայրէն միւս ահագին ոստում մ'ըրած է շարունակելու համար հետադոտութիւնները՝ ռամկային լեզուի դեռ անկոխ պարտաւ դաշտերուն մէջ: Շատ դժուար, պիտի ըսէի անկարելի, վերացմամբ մը կըրցած է երկու լեզուներուն ալ scorien նետելով՝ առնել միայն ինչ որ անհրաժեշտ է առնոց համերաշխ միութիւնը երաշխաւորելու համար, խելացի և իմաստասիրեալ ընտրականութիւն մը վերջապէս: Իր ոճը բնականաբար կրած է այդ ոստումին հետեւանքը: Կը շահագրգռուիս, կը հմայուիս զինքը կարգալով, բայց այսչափ միայն, իր ոճը երփներանգ բոցավառ հրթիռի մը վաղանցիկ մոգականութիւնը ունի, սակայն պիտի նախընտրէիր հանդարտ ծովակի մը վրայ պայծառ լուսնի մը գողտր բանաստեղծութիւնը: Ահա՛ ինչո՞ւ Թէոդիկ դասական մը չի կրնար ըլլալ:

Իր «Դեգերումներուն» մէջ ունի Լօթիի մը նկարէն ոճը, և հուսատարիմ բայց ոչ ստրկային լուսանկարը դէպքերու և իրերու: Երբ զըօսավայր մը, բէյզաժ մ'է նկարագրածը, Corotի մը երանգաւորումը կ'առնէ իր գրիչը: Այնքան լաւ կը գծէ համայնապատկերներ, ա'յնքան լաւ ի վեր կը հանէ իրերու ցայտուն մանրամասնութիւններն ու հանգա-

մանքները, որ ուղեղիդ վրայ կը տպաւորուի անշինջ, նկարագրուած վայրը՝ բոլոր յարակից պարագաներով և գոյներով, գիտէ դիտել և իր դիտողութեանց արդիւնքը նգրսորհն հաղորդել:

Remplissageը անծանօթ է իրեն, կը գրէ միայն ա'յն, ինչ որ անհրաժեշտ է գրել: Հայ լեզուի իր խոր ծանօթութեամբ՝ գիտէ չատոնց մեռած և մոռցուած քաղցրահնչիւն և երբեմն ալ խժալուր բառերը վերակենդանացնել, և գործածութեան մէջ մտցնել: Սակայն արդար ըլլալու համար՝ այդ խժալուր բառերու վերակենդանացման recordը կը վերաբերի Անտոնեանին, որուն փափուկ ճաշակին կը պարտինք «Ըմբռնիմնել» ի պէս փոշոտած բորբոսած բառի մը ընդհանրացումը, զոր արտասանելու համար անհրաժեշտ է կոկորդի անլուր գործունէութիւն մը չարժման մէջ դնել ...:

Կուսակցութեան մարդ չէ բնաւ, ամենուն հետ խօսելու, վարուելու, հասկցուելու եղանակը գիտէ, ո'ր դասակարգին ալ վերաբերին: Ձայնը մեղմ է, քօղարկուած — հաղիւ հասկնալի — և իր երկայն, մառախլապատ պարբերութիւններուն խոիւր շատ լաւ կը պատշաճի իր կիսաստուեր ձայնին երանգին: Այնքան միամիտ չեղտով մը կը խօսի որ՝ իրեն հետ չես գիտեր թէ ո'ւր կը սկսի հեղնութիւնը, և ո'ւր կը վերջանայ:

Առաջնակարգ հեղնող մըն է, ո'չ այն դառն, կծու, չարնախանձ հեգնանքը, որ զայրոյթի և կատաղութեան կարմիրը կը ներկէ դէմքիդ վրայ, այլ անոյշ, վարագուրուած, եթէ կարելի է ըսել խանդաղատալից հեղնութիւն մը, ասեղի շատ միղմ հպանցումի մը պէս, որ ո'չ ցաւ կը պատճառէ, ո'չ ալ հետք կը թողու:

Երբէ'ք իր զգացումները բուռն ու կրակոտ չեն, որչա'փ ալ արտառոց ըլլայ լսածը, չի վրդուիլ, չի խռովի, իրեն համար տարօրինակ բան չկայ, կարծես աշխարհի բոլոր իրադարձութիւնները սերտած գոց ըրած է իր Առձեռնին բառարանին պէս: Հաղիւ մեղմ ժպիտ մը կ'ուրուագծի իր ընչացքին շուրջը: Լճի մը վրայ ինկած կաթիլ մը ջուր, որ կանհետի քանի մը թեթեւ խորշոմներ յառաջ բերելէ վերջ ...:

Նշանակելի է իր գրական անկեղծութիւնը: Ահա՛ ինչո՞ւ հակակիրներու ստուար խումբ մը աւելցուց իր ճանչնոր դէմքերուն առթիւ: Իր գրիչը լախտի հարուածներու կը փոխուի երբ անկեղծ համոզումի մը պայքարը կայ մէջտեղ՝ քաջութիւնը ունի ըսելու «j'appelle un chat un chat et Rolet un fripon»: Արմաշական վարդապետ մը, որուն գրական յաւակնութիւնները խոստոր կը համեմատին իր հասակին հետ, տակաւին իրմէ ստացած ահռելի հարուածին ընդարմացման տակ, իսպառ թօթափած կերեւի իր գրագէտի վերարկուն, դատելով այն երջանիկ ատենէն ի վեր իր պահած խոհեմ լռութենէն ...

Իր սպազան, ինչ որ եղած է իր անցեալը, պայմանաւ որ զուտ գրաբար գրելու քմահաճ նոպայէն չը բռնուի, որուն մէկ նշմոյշը տուաւ Քասիմի մէկ յողումին ոսկեղէն մէկ թարգմանութեան առթիւ...: Օտար հողի մը վրայ ծլած և հիմ արձակած տաքաշխարհիկ բոյս մ'է, իսպառ զրկուած սիրունդ ձգելու հաւանականութիւնէն: Հետեւորդ էր նոյնի, և չկրնար ունենալ, իր հիմնած դպրոցին միակ հեղինակն ու հետեւորդն է:

Հանճարեղ միտք մը, ի սպաս ունենալով ձին, նոր և նորագոյն հայերէններու ճոխ մը թերք մը, իրերու և ղէպքերու իրարու հետ ունեցած հեռաւոր կապակցութեանց ճշգրիտ ըմբռնում մը, Տալինչիի մը և Corotի վերջինը և Ապուլի մը spontanéitéն, ահա՛ վերլուծումը Թէոդիկի նշանակելի դէմքին:

ՎԷՆԵՐԻՍ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ինչպէս նախապէս ծանուցուած էր՝ Սուրհանդակ առաւօտեան տիպար օրաթերթը, վերսկսած է հրատարակուիլ Հոկտեմբեր 1էն, խմբագրապետութեամբ Գեր. Տաճատ Ծ. Վրդ. Ոսկանեանի:

Սուրհանդակ արդէն սիրուած թերթ մը ըլլալով ընթերցասէրներու լուրջ դասակարգէն՝ իր վերերեւումը հաճոյքով կողջունենք, յաջողութիւն և յարատեւութիւն մաղթելով իր կարող խմբագրապետին և խմբագրական նոր ոյժերով կազմուած մարմինին:

ԻՆՉՈՒ ՈՐ...

[ՏԱՆՔԷԶԻ]

Անոնց՝ որոնք տրամիս են

Ինչո՞ւ չեն հագնիր կիներ քանքաջօն
Որ երկարի վար՝ մինչ իրենց քաջօն.

Ինչու ո՛ր...

Ինչո՞ւ ժիւղերնին կը հանեն շաւ վեր
Կիներ որոնք են գեր մեյմէկ հաւեր.

Ինչու ո՛ր...

Կիներ շաւ բաղձան անձրեւոց օդի
Կամ եղանակը ցելի, շաւսիկ, պօթի

Ինչու ո՛ր...

Ինչո՞ւ շաւ կիներ միշտ վազեն սափ տուն
Եւ կամ կը փութին, շաւ կանուխ առտուն.

Ինչու ո՛ր...

Մարդ մը կընոջը ուզածը յանախ
Կ'առնէ կը բերէ փաշտով մե՛ծ ախ.

Ինչու ո՛ր...

Երբ կինդ ե քիչ շաւ գեղանի
Մի՛նակ մի՛ ձգեր, դուրս ելլայ անի

Ինչու ո՛ր...

Յանախ կնիկը քիչ մը քոյլ մարդուն
Գիշերները միշտ կը մնայ արթուն.

Ինչու ո՛ր...

ՌՎ կասկածոց մարդ, գիշերները փակ
Պահէ դուռը, իջիւր վար, մէջի բակ.

Ինչու ո՛ր...

Երբ դուռը չալես, ու փառորդէ մը
Երբ կը գնուիս, կընոջդ դէմը,
Մտածելով անցիւր, դուռնդ սեմը.

Ինչու ո՛ր...

Սենեակ մտնելուդ, աչքովդ երբ տեսար
Քիչ մի՛րարանցում. ձեռքդ հակեիդ տար

Ինչու ո՛ր...

Վ. ԳԸԲԳԳԻՆ

ԱՆՔԱՆԻ ՕՐՈՐԵ

Է. Գ

Կեանքիս մէջ երկու ընկերութիւն չեմ սիրեր, կանանց ընկերութիւնը մէյ մ'ալ Մըրմըրեանինը, կարելի է երկրորդը միմիայն իր մազերէն դատելով:

Երբ քովս կին մը ըլլայ, տանը մէջ թէ փողոցը, չեմ գիտեր ինչ վախ մը կուգայ վրաս և ակամայ կը թացիկնամ, և կառնեմ անանկ վիճակ մը որ, տեսողներ՝ սուրու կըսեն, ըսել է այնքան կը թուլնամ կը քրքրիմ, կը վախնամ:

Կնկան մը հետ մինակ գտնուելը, սակայն այն կնոջ հետ՝ որ քու մականունդ չի կրեր, և մատն ալ ալեանս չունի, կը նմանի dompteurին, որ Քառագեղին մէջ մտնելէ վերջ միայն կզգայ թէ հրազէնը մոռցած է առնելու և ձեռքին մէջ խարազանը կը պակսի:

Կնոջ մէջ վախնալ ... բա՛հ, պիտի ըսեն հիմա իմ այն ընթերցողներս՝ որոնք չաբաթը անգամ մը Բերա կ'ըլլան, և Քոխթալի demie viergesները տասը մէթր հեռուէն դիտելով՝ շատ բան ըրած կը կարծեն, բայց պէտք է գիտնալ որ կինը ... սոսկալի էակ է:

Եւրոպայի շատ մը կայարաններու մէջ սա վերտառութիւնը կը կարդաս, menez-vous des pik-pochets, բայց աւելի աղէկ կըլլայ եթէ ատոր վրայ աւելցուի, menez-vous des femmes, քանի որ գրականախոյզը դրամապանակդ միայն երբ ձեռք ձգէ՝ կծիկը կը դնէ, իսկ կինը՝ դրամապանակդ սոթթելէ վերջ, հոգիիդ, անձիդ, կեանքիդ կսպառնայ ... Et encore !

Սակայն մէկը որ ամբողջ իր կեանքի տեւողութիւնը օտարունիի մը հետ մինակ մնացած չէ, չի կրնար ըմբռնել միտք բանիս (գրաբառ), և չի կրնար ինձ հետ ձայնակից գոչել սոյ մաթեոն թօ՛ղով մը՝

Կի՛ն ... անեղջ հուրը դժողփն ...

Անձանոթ կնոջ մը հետ մինակ մնալուն վրայօք սկսանք, և մտքի հոսանքը՝ որ Ար-

նալուտ գիւղինէն վար չի մնար, ուրե՛ր տա-րաւ զմեզ ... Հապա՞ ... շատ բան գիտնալը ասանկ է, կը շուարիս թէ ո՞ր մէկ գիտցածդ հրապարակես ... (Ես անանկ կ'ըսեմ ...):

Օր մըն ալ շուկայէն դարձիս, առանց գինետան առջեւէն իսկ անցնելու՝ գլուխս տաքութիւն մը զգացի: Կ'այրիմ կոր:

Ծնողքս՝ որ հիմա բերանփոխի համար այլ աշխարհ ջուած են, շուարած ինչ ընելին չէին գիտեր: Եւ սակայն փայտաշէն խարխուլ տան մը պէս կայրէի կը մրկէի:

Ճար չիկար, պէտք էր անկողնոյ ծառայել, ինչպէս կըսեն մաքուր հայեւաբ գործածողները:

Հաւատացէք, մարդ կրնայ սատանային և կամ մամոնային ամենայն ուրախութեամբ ծառայել, բայց անկողնոյ ... անտանելի բան է:

Քսան և չորս ժամուան տաժանագին չալքէչուքէս վերջ միայն, դրացի և փորձառու կիներ — անշուշտ բժիշկին գալ երթալէն վերջ — եկան հաստատել թէ խզամուխ հանած էի:

Հիւանդութիւններ կան, որոնք գիրքէ դուրս կը սեպուին, այս կարգէն է խզամուխը, որուն համար բժշկութիւնը բան մը չըսէր և չի հաւատար, սակայն և այնպէս դուն ասդին կը հատնիս, կը նեղուիս կրակներու մէջ:

Դէմքս որ արդէն շատ բան չըսէր գեղեցկութեանս մասին, այդ հիւանդութեան երեսէն՝ երես մը ըլլալէ դադրած, էնկիւրիւ իսպիսի դարցած էր (հերողութիւն Լիլայ, եթէ տեղ տեղ քու tournureներդ կը գործածեմ):

Անգամ մը հայելին ձեռքս առի, և խեղճ ապակին՝ որ բնաւ յանցանք չունէր, կտոր կտոր եղաւ քոնսօլին մօտ, այնքան ամուր նետեցի սենեկին մէջտեղը:

— Տաք պահելու է կըսէին անոնք՝ ու-

րոնք հիւանդատէս կուգային, տա՛ք, տա՛ք, տա՛ք: Եւ արդէն 39 աստիճան տաքութեան մէջ էի:

Ըսելու հարկ չիկայ, դուք ամէնքդ ալ գիտնալու էք թէ այս իբր թէ զարարսրդ, բայց սայղըսրդ հիւանդութիւնը օր ունի, և թէ այդ օրերուն պէտք է միշտ սենեակը փակուի, և սենեակին ալ անկողինին մէջը:

Ատանկ ըրինք մէկ քանի օր:

Օր մ'ալ լուսահոգի մայրս եկաւ իմացնել թէ՛ պապաս ալ բռնուեր է այդ հիւանդութենէն, և պէտք էր որ ինքը անոր սենեակը մնար միշտ, և ինծի ալ ... ուրիշ հիւանդապահուհի մը յատկացնէր:

Հիւանդապահուհի՞ ... il ne manquait que ça !

Արդեօք քիթը բերանը տեղը մէկը պիտի գար engagé ըլլալ ամբողջ պահեստի օրերուն, թէ լուացարարուհին պիտի բերէին դնէին մօտս, որուն քիթը օգոստոսին իսկ կը վազէր ...:

Հետեւեալ առաւօտուն, կանուխ երբ սըրտիս նեղութենէն պատին վրայի թուղթերը չքնաղ հոլերինքու դէմքերուն նմանցնելով ժամանակ կանցնէի, յանկարծ դուռը բացուելով՝ մայրս ներս մտաւ և ուրիշ կիւն մը, որուն կիւն ըլլալը հաստատեցի միմիայն պետեալ բացակայութենէն:

— Իշտէ աս կնիկը քեզ պիտի դնէ վերցունէ ըսաւ խեղճ մայրս, որ էրիկը չի բարկացնելու համար անմիջապէս մեկնեցաւ առանց կարենալ ուրիշ բացատրութիւն մը տալու:

Կեանքերնուդ մէջ օտար կնոջ մը հետ միշտակ մնացած էք ... That is the question!

Ո՞վ էր, ո՞վ կրնար ըլլալ, ամուսնացած էր, ամուրի՞ էր, որքեւայրի՞ էր, բան մը չի կրցայ հասկնալ, սակայն իր 45 էն 50 տաւանող տարիքին զոյգ լապտերները մէկ երկու ամուսիններ գերեզման առաջնորդած ըլլալնին կը մասնէին:

Ինչուս պէտք, ես իրեն հետ գործ մը չունէի, աքլոր եղբօրը մասալին մեծ թռչունին պէս, ջուր ուղէի՛ ջուր պիտի տար, կաթ ուղէի՛ կաթ, ուրիշ ... անկողինն էի և հիւանդ bien entendu!

Երեսս պատին դարձուցած երբ քնանալ

կուզէի պահ մը, օտար կնոջ մը հետ առանձին գտնուելուս գաղափարը զիս կը ցնցէր և իսկոյն ասդին կը դարնայի վախէս:

Երկու օր երկու գիշեր միասին անցուցինք, առանց Աւետարանէն թուղթ պատուելու չափ մեծ մեղքերու մատնուելու: Եւ սակայն ...

Հոս է ահա բուն խնդիրը:

Երբորդ գիշերը — բայց կեցէք սա չափը ըսեմ որ կնկանը աչքերուն չէի հաւնիր, ոչ թէ տգեղ ըլլալուն, այլ անոնց մէջ նշմարած էի այն տեսակ մը ինչը՝ որ մենք էրիկմարդիքս լաւ կը հասկնանք, և ի հարկին լաւ կրնանք մեկնել անոնց լուռ ու համբ տեսակէցութիւնը — այո՛ւ երբորդ գիշերն էր: Տանը մէջ ամէն ոք պառկած, նոյն իսկ շշուկ մը չէր լսուէր չորս գիշէն: Անկողինիս մէջ պառկած հոս հոն կը դիտէի, ու կիւն ալ սենեակին մէջ կը պտտէի, բայց պտտել ալ կար պտտել ալ: Այս կիւնը խելագարի, դիւանաբի շոշորդն ունէր կարծես վրան, մերթ քովս կուգար կը կենար, մերթ պատուհանին կը մօտենար, և մերթ սենեակին դրան կը մօտենար և ականջ կուտար դուրսը:

Բանս բոս ցած էր, անպատճառ կնկանը խելիւն եկած էր, ու ես փոխանակ անկէ ինամուելու՝ պէտի ստիպուէի զինքը խնամել ու հանդարտեցնել, մինչեւ որ վարէն օգնութեան հասնէին:

Ա՛խ ... անծանօթ կնկան մը հետ միշտակ մընալը ...:

Ժամը քանին կար չեմ գիտեր, որպէս զի յիշեմ յանկարծ այդ հիւանդապահուհի ըսուածը՝ ծունգի եկաւ մահճակալին մօտ և երկու ձեռքերը երկարելով՝

— Ոտքդ պագնեմ, հալըս նայէ տէ մէրամէթ ըրէ ... չըսէ՞ մի ...

—

Ես այդ կնկանը ի՛նչպէս կրնայի մեքամեք ընել ...: Բաւաստուէն վերջ կիւնքը կը նմանին հինցած կօշիկներու, որոնց մէրամէթը կոշկակարի գործ չէ, այլ ... էսկիճի ...

— Դուն գիտես, քանի գիշեր է լսօք պիտի բանամ, ֆախաթ պիտի թիւռլիւ ձէտարէթ չէի ընէր կոր ... մէրամէթ ըրէ ...

Վայրկենապէս ելայ նստեցայ անկողնոյս մէջ, աչքերս բացուեցան, վերմակս վրայէս

նետեցի և մէկ ոստումով ինքզինքս սենեկին
մնջտեղը գտայ ... :

Հոթենթերէն չէր կնկանը ըսածը, ոչ ալ
հնդկաշինարէն, շատ լաւ կը հասկնայի կոր
թէ ինչ ըսել կուզէր ան, բայց ... քօնսօլին
վրայի կանդեղը ալօտ լոյս մը միայն կը
սփռէր չորս դին :

Վէպեր շատ կարդացած էի, և պահ մը
կարծեցի որ կերպով :

Կինը ծունդերուն վրայ սողոսկելով՝ գիտ
կը հալածէր, որ անկիւնը որ քաշուէի՝ հոն
կուգար :

— Ատքդ պագնեմ ... չեմ դիմանար
կոր ... հալըս նայէ մերամեք ըրէ ...

Անպատճառ մերամեքի պէտք ունի եղեր
մաքումը, բայց ...

Խեղճ մայրս վարէն կէս գիշերին անա-
կընկալ ոտքի ձայններէն կասկածելով թէ մի-
գուցէ աւրուած ըլլամ, վեր վազեց :

Հիւանդագրասունին իր անկիւնը քաշուե-
ցաւ, ու ես վերմակիս տակ սողոսկեցայ :

— Ի՞նչ է ան Դայիթա՞յ ... չօճօխը բա՛ն
մը եղաւ ... հարցուց խեղճը շփոթած ու
չուարած ...

— Չէ՛ ... մշիկ մշիկ կը քնանայ կոր,
ես ելայ տէ ջուր մը խմեցի ...

— Հա՛ ... դող ելայ նէ՛ ... ըսելով
քաշուեցաւ իր սենեակը, ու ես սկսայ այս
անակնկալ խնդրոյն վրայ փրկսփայփօրէն
խորհրդածել, ուսումնասիրելու համար կնոջ
հողերանութիւնը, որ շատեր փորձած են ու
չեն յաջողած :

* * *

Ամէն կնկան մէջ, որ տարեքը ունենայ
ուրեքնայ, սատանայ մը կայ պահուած, ահա
ինչու կը սոսկամ օտար կնկան մը հետ մինակ
մնալէ :

ԴՕՊՈՒՍ

ԿԱՐԱՊԵՏ ՊՈՒՐՄԱԵԱՆ

Ռէքլամ մը չէ որ պիտի կարդաք, այլ խեղճ գիրքէ
դուր հաշիւ մը, ասկէ երկու շաբաթ առաջ, գրու-
վածառ Խսկիեան Էֆէնտիի գրած է թէ իր պարտքը՝
իբր նախորդ գործակալ Հանրագիտակի՝ 242 ղրուշ է,
և թէ եթէ խմբագրութիւնը հաւանի՝ ԱՆՄԻՋԱՊԵՍ
պիտի ղրկէ դրամը, խմբագրութիւնը հաւանած ըլլալը
շայտենիէ վերջ տէ՛ր ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳ օր և դեռ դը-
րամները մշուշի մէջ են :

Յաջորդիւ ՕՐԷՆՔՈՎ պիտի տեսնուիք :

ՕՍԻՕԲԱԹԻՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԱԳԻՐՆԵՐ

Խմբագրութեան հասած բազում խրնդ-
րանքներուն ի պատասխան՝ Լիլա կը խոսա-
նայ օր օրին հասցնել այն օմիօքաքի դեղա-
գիրները, որոնք ուրիշ տարիներ այնքան ա-
խորժով կը կարդացուէին նոյն այս սիւնակ-
ներուն մէջ :

Վարկածներ տուողքմիւր ընելու համար :

Էփսոսէ Գլիլիս սը խանքարլամ :

Բազմութեան մէջ :

Ֆոխիսիօն տէրտէրի :

Շաբաթը մէկ անգամ :

Պէն սը ֆիւֆիւրս սուլու :

Պառկած ատենները :

Հարս ու կեսուր տոյիկ ընելու համար :

Բիլիւ չախիկ :

Փետին կողմէ՝ օրը անգամ մը :

Էլիփսիո ս'աչֆ խրք :

Իքի Թառափը :

Սեքառասիօն սը շամպուր :

Օրը 24 ժամ :

Փետայ զսնելու համար :

Պի օֆիս խլավուգիֆ 100 pour 100 :

Ռաստ կէլէ :

Սալիսիլաք ոսկիկ :

Ավուճ ավուճ :

Բենեիք տուտուի քուք ալա շիֆ :

Իրիկունները :

Սիրահարութեան ես կենալու համար :

Քլօսիւն սը մառիաժ :

Նասը կէլիքսէ կէլիւն :

Էփսոսէ տօղափոխութիւն :

Բասկիդ կէօրէ :

Բուսուր կամարգիկ :

Բաթէֆօռա :

Տօք. ԼԻԼԱ

ԿԻՆ ԹԱՂԱԿԱՆՆԵՐ...

[ԶԸԼԼԱԼԻՔ ՅՕԴՈՒԱԾ]

Կիները գործի մէջ միմիայն խալվուզ կը ճանչնայինք, բայց վերջին տարիներուն մէջ օտար թերթեր մեզ հասցուցին սա անակընկալ լուրը թէ՛ կինները կառապան, կինները բժիշկ, կինները դեղագործ, կինները հեռագրատան պաշտօնեայ, կինները սանկ, կինները նանկ, վերջապէս en un mot, կինները սկըսան էրեկմարդոց քար հանելու չափ իշկիւզարութիւն ցոյց տալ, որուն երեսէն չեմ գիտեր թէ՛ վրայ առինք թէ վրայ տուինք:

Ի՞նչ անուշ կ'ըլլայ արդեօք կին բժիշկի մը ձեռքը տալ դաստակը քննութեան համար, և ինչ աղուոր կ'ըլլայ արդեօք երբ մարդ կին մը ունենայ իր առջեւ իբր կառապան, և ինչ դիւթակօն կ'ըլլայ երբ մէկը երթայ հեռագրատուն և կնոջ մը թուղթի կտոր մը երկնցնէ, ու ան ալ սկսի թիք, թիքի թաք, թաքա թիք թիք թաք հեռագրել:

Ես իմ մասին խօսելով, օրը քսան և չորս ժամ հիւանդ պիտի ըլլայի, կառքերէն վար չպիտի իջնայի, ամբողջ բարեկամներս ճաշի հրաւիրելու համար օրը երկու անգամ հեռագրատուն պիտի վազէի ... երազիս մէջ անշուշտ, որպէս զի կուշտ ու կուռ վայելեմ այդ գեղեցիկ սեռը, հակառակ՝ հակառակ ըլլալուս double façon!

Բայց խնդիրը ատ չէ, կը մտածեմ որ եթէ օր մը այնքան բարակնանկ որ քէչիլի մախառան ալ անցնինք ու մեր եկեղեցական գործերը կառավարելու համար ըստ զիւպպ ալաֆռանկային՝ կիներու քուէ տանք, որպէս զի կանաչ սեղանին չուրջը անցնին ... Համմէ՛, ի՞նչ կը յուսաք, եկեղեցւոյ հասոյթները կաւեղնա՞ն, թէ թախըմով բիւթիւն վրայ կուտանք:

Հիմայ՝ որ սենեակիս մէջ փակուած կը գրեմ այս տողերը, կը տարուիմ մտածել և մտովի պատկառելի խորհուրդ մը կազմել, մէկը մտքիս մէջ՝ մէկն ալ ո՛ր է եկեղեցիի մը խորհրդարանը:

Տասներկու աթոռ մառօքէն, վարագոյրները թիւլ, սթօռ՝ ճոխ էթաժէններով, դըռնապանուհի մը fonuk skur այնքան սեղմած որ՝ մարդուն քաշել հանելը կուգայ մեղքընաէն, քիչ մը անդին լաւապօ մը վրան մեծ կակ հայելով և որուն վրայ մէկ քանի սուփ բուռը լօս, չի՛ մը o sp foյօներ, ասփնսրն տեսակէն, բաք սանթիճուխ, երկու սանտր, երկու խօզանակ, աման մը գնդասեղ, ֆուռքէթներ, մանր մունր ժապաւէններ, ուրիշ բաներ և քիւլիք մը:

Ժամը չորսն է, և անա ստենապետուհին բէշերը վեր սոթթած, ա լա Մառկոիք գըլխարկը չորս հինգ օրէններով բռնել տուած ներս կը մտնայ, և իսկոյն քիս մի ֆուլիք հոտ մըն է կը բուրէ սենեակին մէջ, և կուգայ կը բազմի մէջ տեղի ֆօթէօյին վրայ, սեղանին վրայ դրուած մէկ երկու գոց նամակները բանալով, որոնց վրայ սանկ գրուած է՝

Համեստուհի Ասեմապետուհի՛ այս ինչ եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ.

Եւայլն Եւայլն Եւայլն

Մինչ տիկինը ընթերցմամբ զբաղած է, մէկ կողմէն միւս անդամուհիները մէկիկ մէկիկ ներս կը մտնան և իրենց գլխարկները հանելէ ու մէկ կողմ դնելէ վերջ՝ կարգաւ կանցնին կը նստին իրենց աթոռներուն վրայ, մինչ դուրսը բառամանայ մը տարու ու կէսու պէպէ մը գրկած հորու հորու վեր կը ցատկցնէ չի լացնելու համար:

Ատենապետուհին մօտը դրուած զանգաւ կը հնչեցնելով՝

— Ատենանք բացուած է ընկերուհիներ, պիտի խնդրեմ որ առաջ՝ սա ամուսինէն գանա գատող կնոջ խնդրովը ղրաղինք ...

— Շատ լաւ, բայց նախ ըսեմ որ ժամը ճիշդ վեցին ստիպուած եմ մեկնիլ, որովհետեւ մօտիսդս պիտի գայ, և գիտնալու էք որ Բերայէն եկող մը շատ չի կրնար սպասել, կըսէ անդամուհի մը:

— Արդէն ես ալ գիշերուընէ քնհատ եմ, խօսք կառնէ ուրիշ մը, երեկ գիշեր բօքէո՛ր հրաւիրեալներ ունէինք և գրեթէ լուսցուցինք, այնպէս որ ...

— Ուրեմն այսօր կանոնաւոր նիստ չպիտի կրնանք ընելու, կը յարէ Ատենապետուհին, մինչդեռ կարեւոր հարցեր ունինք սեղանին վրայ ...

— Ամա աս ամէն իժիռ է մէյմէկ պօճօղ կը հանէք կոր ... կըսէ ուրիշ անդամուհի մը, անոր նայիս նէ մենք ալ երէկ չամաչիր ունէինք, տիրօր քի փռեցի, ժողվեցի նէ թեւերս փրթաւ ամա՛, կէնէ ժողվողք կայ տէյի ելայ տաղըրա տաղըր եկայ ...

— Չէ՛ ... Ըլլալուկան պանչէ, նայեցէք ձեզի ըսեմ կը պատասխանէ ուրիշ մը որ սիկառին՝ մէկը կը մարէր՝ միւսը կը վառէր, քանի որ քի մեզի գործի կլոխ անցուցեր են պէտքութիւն է քի հոգով մարմնով նայինք, պէտք եղածին պէս ուսուսումը տեղը դնենք, ա՛նճապ ես տունը գործ չունիմ, նէ իսէ, աղջըկանս աշկը կռնակս ի վար կախուեցաւ դուրս ելայ նէ ...

— Իրաւունք ունին դիտողութիւն ընողները, բայց քանի որ մեծամասնութիւնը մէկ մէկ պատճառով մեկնիլ կուզէ, ուստի միմիայն սա կնոջը խնդրանքը նկատի առնենք ու վերջացնենք, կըսէ Ատենապետուհին, սեղանին վրայէն նամակը ձեռք առնելով, տեսէք հոս ինչ կ'ըսէ ինզճ կինը, իբր թէ ամուսինը խման մը ըլլալով, երբէք իր կնոջը և զաւկներուն չի նայիր եղէր, և թէ կը ծեծէ եղէր, ուստի այս կինը կը խնդրէ որ իրեն այս անել կեանքը բարեփոխենք և վերջ մը տանք այդ անօրէնին արարքներուն:

— Էյ բէք աղէկ, կնիկը հոս է նէ, անգամ մը կանչենք և բերանացի բացատրութիւն պահանջենք եթէ կարելի է, կընդմիջէ Ատենադպրուհին:

— Հապա՛, տա կնիկը մէյմը ներս կանչենք ... կ'ըսեն միւսները և զանգակը կը հնչուի:

— Հրամանեցէ՛ք, կ'ըսէ դռնապանը բարեբանած:

— Սա ո՛ւր է սեւերով կընիկ մը կար, անիկայ եթէ հոս է ըսէ քիչ մը ներս գայ ...

— Շատ լաւ, ըսելով դռնապանը դուրս

կելլայ ու քիչ վերջը իրօք սեւեր հագած կինը ներս մտնելով՝ կը կենայ, իբր թէ նոր սպասուհի մը ըլլար, ճիտը ծուռ և լալկան դիմօք:

— Ինծի նայէ քոյր, կ'ըսէ Ատենապետուհին, դուք հոս նամակ մը գրած էք ...

— Ես չի գրեցի, ես գիր չիյտեմ քի ... քովի Սեղբօսիկը գրեց ...

— Ինչ և է, որուն մէջ ձեր ամուսինէն կը զանգատիք թէ կը խմէ և ձեզի պէտք եղածին պէս չի նայիր, անսնկ է ...

— Ա՛խ, արեւնուտ կոտորտիմ, ինծի խալսեցէք, ես իւթիւ քօլա, աւել, օռթայի խզմէթ ալ կընեմ, մէկերնուգ մէկը քովերնիդ առէք, եանի ժամ չիյնածի խրտար կըլլաք ... ալթըխ դիմանալու թախաթս չի մնաց, օսկոռ տէրիս մնաց, վախիթ մը ինծի կիւզէլ Ագապի կըսէին՝ մէյ մըն ալ պերներնուն կելլար, հիմա նայեցէք, մայիս չըռողի եմ դառցեր ...

— Շատ լաւ, ատոնք խնդիր չեն, դուք ուրիշ առթիւ համոզած չէ՛ք ձեր ամուսինը որպէս զի ետ կենայ իր այդ տղեղ վարժունքէն ... կ'ըսէ Ատենապետուհին:

— Բա ճանըմ չե՛ս հասկընար կոր, էրիկ մարդ խամին եօլի կալի՛ք ճանաւարներ են, կնիկը նայէ ինչ հալ է ինկեր ... խօսք կ'առնէ ուրիշ մը:

— Պերանդ պագնեմ ... նայէ ինչ եօլով կըսէ ... ճանաւար է ճանաւար, մարդ չէ՛ քի, տեսաք նէ կը սոսկաք ...

— Մերինս ալ կը խմէ ամա, տունը, իրիկունները հարուր տիրեմնոց մը ունի միւնչոք քի չիչէին տիպի մառքան չերեւայ նէ չի քաշուիր ամա, մեղայ քի ծուռ մը նայի եախօտ ծառք վերցունէ ...

— Կաղաչեմ, գործերնիս նայինք ... Ըսելով խօսքը կնոջը ուղղելով՝ Ատենապետուհին կը շարունակէ, շատ լաւ, հիմա ի՛նչ կուզէք որ ըլլուի ...

— Սա իրիճա կընեմ քի, իս ատ զալըմին ծառքէն ազատէք, խայիլ եմ չամաչիր լուամ, խըզմէթ քեարութան երթամ, չօճօխներ նախիմ, ատոր ետմուռճախ սուռաթէն հեռու ըլլամ, աս իրիճա կընեմ, գուզում դուք գիտէք ...:

Նոյն ատեն դուռը բացուելով՝ բառամա-
նան ներս կը մտնայ,

— Գուգում հանրմ, սըւոր քիչ մը կաթ
տայիւր, ալթըխ տամարները կը ճաթին կոր,
ինչ կընեմ նէ սուս չըլլար կոր ...

— Բիճ խուռուսի, պեր նայիմ ըսելով
ժայրը գիրկը կ'առնէ տղան, և ինչպէս սո-
վորութիւն է, երկու մատին մէջտեղը առ-
նելով կենաց ջուրին աղբերակը՝ կսկսի ծըր
ծըր կաթ տալ:

— Քա ճանրմ, ֆարապա, տունը պիպուն
տայիք տէ աս ժողովողքին մէջը չօճօխ չի
բերէիք, կըսէ ուրիշ մը ...:

— Ինչ ընեմ, չի կենար կոր, չի նայիս
լալէն մոս մոռ է եղէր ...

— Աղէկ աղա, ասանկ տեղն ալ գիտնա-
լըս չօճօխը քիչ մը ... Ինչ գիտնամ ...

— Հոգեզաւակ չէ՞ եա ... չօգ շէյ ...
Աստուծոյ տուածը, քեզի զարար մը ունի՞
մախսըմըս ... Նայէ թաքիքէին սուս եղաւ,
դուք գործերնիդ նայեցէք ... բառամանա,
փոխնորդ մը բեր, նայէ օրիներ է, կելլայ կը
պաղի ...

Եւ ասդին խօսակցութիւնը կը շարու-
նակուի:

— Հիմա ինծի նայէ տիկին, մենք ամու-
սինդ պիտի կանչել տանք, պէտք եղածը
պիտի խրատենք, եթէ սգաստացաւ՝ աղէկ,
եթէ ոչ՝ պատկանեալ ժողովին կը գրենք ձեր
խնդիրը կը նայուի, հիմա կրնաք երթալ ...

— Ոտքերնիդ պագնեմ, էկէր իմանայ քի
ձեզի չիքեայէթ եմ ըրեր նէ, ծուրկս, բէս-
տիւս կը հանէ ...

— Լաւ, լաւ, օր առաջ մենք պէտք ե-
ղածը կը տնօրինենք, արդէն մեր պաշտօնն
ալ այդ կարգի խնդիրներով զբաղիլ է, ան-
հոգ եղիք, կ'ըսէ Ատենապետուհին, և կինը
ձիւրը ծուռ դուրս կելլայ, մինչ քահանայ մը
քրտինքներու մէջ ներս մտնելով:

— Ճանրմ աս ըլլալու բան չէ, Տէր Կո-
միտասը չորս անգամ է թապախը ձեռքը ներս
մտաւ, մեզի հիչ սօլուխ չիգայ ... եկէք տէ
եռուր երկու լախըռտը ըրէք, մենք ալ ըն-
տանիքի երեցկինի տէր ենք, էրիկ մարդ
թաղականներ ըլլար նէ անոր հախէն կուգար,
հիմա չիտակը պիտի ըսեմ ...

— Դուն հոգ մընէր տէրտէր, կը կար-

գաղրուի ... ան չէ ամա իրիսկինը ան ինչ
սիւս ան ինչ սիւս ... անցած օր Պէյօղլու
տեսայ, էյ իրաւոր չի ճանչցայ ... կըսէ ան-
դամուհի մը, սիկառը քաշելով:

— Ինչո՞ւ չընէ, կինճ ու կանանչ իրիս-
կին, բարով իրիսկին մըն է, թող վայլէ վայ-
լեցունէ, նայէ տէրպապան լեռան պէս կայ-
ներ է ...

— Հիմա վազ անցէք սիւսը տէ, սա թա-
պախին գործը կարգադրեցէք ... ճանրմ
ժամէն կեղլան կոր, տահա մէթալիք մը սիֆ-
տահ չունիմ ...

— Գուգում տէրպապա, տուն երթաս նէ
իրիսկինին հարցուր քի, թէփէյի թիւը ո՞ր
մաղազայէն է տուէր, հէմ ալ քանի դրուշ,
ես ալ պիտի առնեմ տէ, ան է հարցունելու...
կըսէ ուրիշ մը ...

— Քիչ մը տահա էրէբաք նէ՝ թիւը իմ
թէփէս պիտի բռննի ... նայէ կիւրիւֆ
կիւրիւֆ դուրս կելլան կոր, ան իսէ գործը
շտկեց տուն երթայ հէլվա պիտի կոխէ ...

— Շատ լաւ Տէր հայր, պէտք եղածը
պիտի տնօրինենք, դուք տնտօգ եղիք ըսե-
լով Ատենապետուհին զանգակը կը զարնէ,
և ահա քօռսէլի սպասուհի մը ներս մտնելով,

— Իպրաքսէ, գնայ ներսը պնակ չըջա-
գայող քահանային ըսէ որ վեր Խորհրդարան
գայ քիչ մը ...

— Շատ աղէկ ըսելով մինչ սպասուհին
դուրս կելլայ, յանկարծ բարձրաձայն խօ-
սակցութիւն մըն է կսկսի,

— Պէ ճանրմ կնիկս չէ՞ մի, ներս պիտի
մտնամ ...

— Չըլլար ճանրմ, ժողովք ունին ...

— Երկու չիֆթ լախըռտը ընեմ դուրս
պիտի ելլամ ... կը պնդէ մարդը ...

— Մեզի ասանկ հրաման կայ որ՝ նիստ
եղած ատենը մարդ ներս չի մտնայ ...

— Էյ տէրտէրը ներսէն դուրս ելաւ նէ ...

— Ան քահանայ է ...

— Հա՛ ... քահանայ է՝ ... էյ չէնէ
դուն գնայ կնկանս ըսէ քի տողապին բալ-
լիքները ո՞ւր է դէր, շարթու գըլիս փոխ-
ուիմ պիտի, չամաչիքները դերը կղպեր է ...

— Շատ լաւ, երթամ ըսեմ ...

— Կայնէ տահա բան պիտի ըսեմ, ըսէ քի
չաքուխ ըլլայ, ցերեկուան միսաֆիր ունիմ

կերակուրի, թող գայ տէ երկու թուռի բան հասցունէ ...

— Շատ աղէկ, ատ ալ կըսեմ ըսելով ներս կը մտնայ ծառան, ու քիչ վերջը անգամուհին որ այդ մարդուն կինն էր՝ դուրս կելլայ ...

— Ի՞նչ է ճանճմ, կը պոռաս կը կանչես կոր ... ներսը ժողովողք կայ ...

— Հայ բարով խերով քեզի այդ գործին դնէին ... հասկցա՞ր ... առտուն ձգեր գացեր ես, չամաչիր պիտի փոխեմ չիգայ, տունը միսաֆիր պիտի գայ՝ եփող թափող չիկայ ... հայտէ հիմա հետս պիտի գաս ...

— Կայնէ նայինք զլիսաւորնիս երբ ժողովողքը պիտի վերցունէ ...

— Գլխաւորդ ես եմ, անանկ լաֆեր մը տիկ չեմ կրնար կոր ընէր, թէ՛ղ ըրէ ...

— Էյ երթամ հրաման առնեմ չէնէ, ըսելով ներս կը մտնայ և խօսքը Ատենապետունիին ուղղելով,

— Խայի՛լ էս քի աճապ ես տուն երթամ, մարդս եկեր է փոխնորդ կուզէ կոր, հէ՛մ ալ ուռուտումը միսաֆիր ունի եղէր, երթամ տէ երկու թուռի կերակուր վրան զարնեմ, ..

— Բայց գիտնալու էք որ այսօր կարիւրը խնդիրներ ունինք լուծելիք ...

— Հա՛, ամա, լախըտը կը հասկնա՞յ քի հէրիֆը, իլլէ առջին ձգէ տանի պիտի, էյէր քիչ մըն ալ ուշանամ նէ կրակ կը կտրի ...

— Շատ լաւ, կրնաք երթալ, բայց ձեր կարծիքին համար ուրիշ անդամուհի մը պէտք է ընարէք և անոր արտօնէք ձեր կողմէն կարծիք յայտնելու ...

— Բէ՛ք աղէկ, նա Տիկ. Շահանդուռը, թող իմ թառափէս կլտի երեքունէ, զաթը ձմեռուան շաբաանիս ալ երկուքս մէկ կուստօ կապել տուինք ...

— Հա՛, հա՛, հա՛, ես քու տեղդ ճուղապ կուտամ, հայտէ դուն բանիդ գնայ, կըսէ Տիկինը, և այսպէս այր և կին տուն կը դառնան:

Ու հազիւ պիտի սկսէին խօսիլ ուրիշ նիւթերու վրայ, յանկարծ այն կինը որ զաւակին կաթ կուտար, տեղէն ցատկելով,

— Բաթլամի՛շ ըլլաս, քի՛ծ խուռուսի, սա նայէ, չի՛շ մը տրաւ քի ... քառամանայ,

հասի՛ր ... պարէ նոր շինած ֆիստանս ալ չըլլա՞ր նէ ...

Բառամանան վաղելով կը հասնի:

— Ճանճմ ասոր տակը քէչէ չի դնե՞ս ... սա եղածը նայէ հէլէ՞ ... , ոտքի կելլայ մեկնելու:

— Դուք ալ կը մեկնիք Տիկին կը հարցնէ Ատենապետունին:

— Հապա ի՞նչ ընեմ, ասանկ թափ թաց նստի՛մ, պաղը ճիւղէրս կաննի կոր ...

— Շատ լաւ, կրնաք մեկնիլ, բայց ուրիշ անգամ ջանացէք առանց պզտիկի գալ:

— Կը կենա՞յ քի բիշքօն, իլլէ ինծի կուզէ, իմ վրաս ալըշմիշ եղած է ...

— Լաւ, ձեր կարծիքը որո՞ւ կը յանձնէք:

— Տիկին Նունուֆառին, զաթը ան իմ խուլըս խուսըս գիտէ, օխտը տարի քովէ քով դրացնութիւն ըրեր ենք տէ, օր մը օրանց իրարու խառնախառն մը պիլէ չենք ըսեր ...

— Լաւ, մինք մեր նիստը կը չարուհաւ կենք:

Տիկինը դաւակը կառնէ կը մեկնի, և նոյն պահուն ջրհանկիր մը ներս կը մտնէ ...

— Ասծուծու սիրուն ըլլայ, մէրեւմ անա հազգը իչին, էօլիւնիւզին տիրինիզին ճանընը սէվէրսէնիզ, սա կընիկ օլաճախըս խոտեցէք փսօռճիկ մը ...

— Ի՞նչ է ան, ի՞նչ կընէ կոր ... ըսէք տեսներք կ'ըսէ Ատենապետունին սոսկացած:

— Հի՛շ, ի՞նչ պիտոռ ընէ, հատտի մի՞ տիռ քա՛ քի պիռ չէյ հաքաճագ, խոխուննեռ յոգնած կուգամ նէ, հալառ անգամ ըսեռ եմ քի ըռախիս թէփսին շտկէ տէյի, պիր թիւռլիւ գաֆասընա սօգամատըմ ...

— Բայց գիտնալու էք որ իմիւր աղսոր բան չէ ... ձեզի սիրելուն կարելի է որ կընդգիմանայ խեղճը ...

— Եօ՛գ, պանա պագ մատամ, ես խըռատ առնելու չեկայ, էկէր քիմ դուք պան մը չպիտի կոնաք ընեռ նէ, ես անոր գօլունտան թութաղըմ կիպի սաբան թաշը միսալի ֆըռլաթառըռըմ ...

— Վույ ծունը գլխուս, ինչեք կըսէ կոր... խօսք կառնէ ուրիշ տիկին մը, վախէն կըծկուած:

— Շատ աղէկ, դուք քիչ մը դուրսը կեցէք, մենք խորհինք այս խնդրոյն վրայ...

— Աչըզ սէօյլէին պանա, պէն էօյլէ գը-
ռաբառտան չագմամ, աս եռմուռնախը դուրս
պիտի ընեմ տունես ... հասկըցա՞ն ...

— Լաւ, լաւ, մենք կը խրատենք, կ'ըսէ
Ատենապետունին, ու մարդը դուրս կելլայ:

Ու հագիւ թէ նիստը պիտի շարունակուէր,
յանկարծ մէջերնէն անդամուհի մը որ յղի էր,
կսկսի երկունքի ցաւերը քաշել ...

— Ի՞նչ կ'ըլլաս կոր քուրուկ, ցաւե՞րդ
պոնեց ...

— Հա՛, ամա՛ն չարէս, իս տուն տարէք,
աղէկ չեմ իմանար կոր ...

— Ոտքդ պագնեմ ակուղ սխմէ կտոր-
ճիկ մը, առապա մը բերել տանք ...

— Չըլլար ճանըմ, սարսմիշ կ'ընէ ...

— Չէնէ սէթեան թող բերէն ... չա-
բուխ սէթեա՛յ, սէթեա՛յ ...

— Ամա՛ն ... կը մեռնիմ կոր ...

Ատենապետունին տեսնելով որ ճար չի-
կայ, զանգակը հնչեցնելով կ'ըսէ,

— Ժողովքը դադրած է, կրնաք մեկնիլ:


* * *

Կարծեմ բաւական դուարձացաք այս ե-
րեւակայական պատկերը կարդալով, ազնիւ
ընթերցողք: Ահա այսպէս պիտի ըլլայ երբ
Ֆէմինիզմը յառաջանալով կին թաղականներ
ունենանք, բայց ինչպէս տեսաք կարգ մը
անպատեհութիւններ կան այդ գործին մէջ,
որոնք բացարձակապէս կարգիլէն այդ դա-
ղափարին իրագործուիլը: Ուստի անոնք՝ ո-
րոնք քիչ թէ շատ մտքերնէն կանցնէին գը-
լուխ հանել այս պարագան, թող տեղերնին
ծանր նստին:

Կիները նախ իրենց տունները թող կառա-
վարել գիտնան՝ վերջը Աստուծոյ Տունը:

ԼԻԼԱ

 Տե՛ս Փալագաշեան Աղջկանց
Բարձրագոյն Լարժարանի աղղը՝ կողքին վրայ:



... Ծովահանաց անկիւնի մեծադիր սեն-
եակն է ան՝ ուր յանկարծ յոյս մը կը վառի:
Կը հանուին: Յետոյ յոյսը կը պզտիկնայ
veilleuseի մը չափ հագիւ յոյս տալու ասի-
ճան: Եւ շուտով իրար կը պլուին յանկարծ,
կը ծալուին եւ կը քաղուին քոյրուովին:

Վարը, սիրահրաւեր ու սենշաքորքոք
երգերը կը պոպոպան, կիները կը իրջան,
սղաք կը թռչնան, հարթածները կը ծափեն,
ուրիշներ կ'ուսեն, կը խնեն, կը ցասեն, կը
խաղան ճշմարիտ հարսնետոհմերու պէս,
միևնչեռն վերը այդ պահուն ...

... Օ՛հ այդ պահուն:

ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ

Օ՛հ, ինչ կ'ընէին այդ պահուն ...

Համո՞հ ...

Ան ալ գրէիք և քաւամ ըլլար ...

Կերեւայ որ այն ատեն, իրաւ թէ նկա-
րագրել ուզած էք այդ պահն ալ ... բայց
կարմրած ըլլալու էք և կամ գրիչնիդ չբա-
լել ուխտած է ...

Ո՛հ, այդ պահուն վերը ... այո՛, վերը
այդ պահուն ...

Խնդրեմ ըսէք ի՞նչ կ'ընէին ...

«Կը հանուին» ըսեր էք, «կը սլլուին» ը-
սեր էք, «կը ծալուին» ըսեր էք, «կը թաղ-
ուին» ըսեր էք և ուրիշ ...

Ինչո՞ւ չգրեցիք՝ քանի որ գիտակից էիք
թէ՝ անոնք վերը ի՞նչ կ'ընէին այդ պահուն:

Ոչ թէ դուք, հապա՛ ձեր միւս ընկերնե-
րն ալ գիտակից էին ատոր ...

Եւ ... աչքերնուդ առջեւ կուգար այդ
պահը ...

Ու իրարու թեւ կը սեղմէիք ...

Ձեր աչքերը Ռէօնկթէնեան ճառագայթներ
կ'արձակէր այն պահուն և ... այն պահը կը
գիտէր ...

Եւ այդ պահը ...

Այո՛, այդ պահը դիտելու համար մինչև
կէս գիշեր սպասեք էք ...

Ո՛հ, այդ պահը, համմէ՛ ...

Բայց, այդ պահուն ձեռքերնիդ ճակատ-
նուղ չտարի՛ք ... ձեր աչքին վրայ լուսամ-
փոփ ընելու և աղէկ դիտելու համար ...

Եթէ տանէիք, այն ատեն պիտի հասկը-
նայիք, որ այդ պահը շատ խորհրդաւոր է:

* * *

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Ամենաբարձր բարոյա-
կանը՝ բարոյականութիւնէ անբարոյականացած
ըլլալը հասկցնելու համար, պէտք է բարո-
յախօս ըլլալով՝ բարոյականը բարոյականաց-
նել, ինչու որ մէկ առաւել մէկ բարոյական
հաւասար է երկու բարոյականի:

«Գրագէտները բարոյականի տեսակ մը
տօքթօրներ են, որոնք մոլութեանց ախտա-
բուժերը պիտի ըլլան աւելի, քան զանոնք
տարածելու նոր միջոցը: Աշխարհի աչքին
ներքնասնեակներու լկտի տեսարանները փայ-
լուն ներկայացնելով՝ զանոնք ալ աւելի հը-
րապուրելի ու ընդօրինակելի ընել է, որուն
դէմ հին թէ նոր բոլոր գրական հոյակապ
տաղանդներ չեն ներեր որ մոլութիւնը հրա-
պուրելի ներկայացուի»:

Թեթեւ գրականութեան աշխատաւորնե-
րուն ձգենք որ իրենց գրելին փաթթեն այդ
լկտի տեսարանները, օրուան զաւեշտագիրը
թող գրէ իր կարող գրելով և գահ գահայով
մը զգացնել չիտայ:

Զիֆթէ-Սարաֆ էֆէնտի, խնդրեմ, բան
մ'ալ ըսեմ ու վերջացնեմ՝ առանց հեգնանքի
սակայն. երբ, երիտասարդ մը, որ կնոջ ինչ
ըլլալը դեռ չգիտէր և կարդայ Այն պահդ,
և երբ իր զրգուրտին յագուրդ տալու հա-
մար սենեակ մը քաշուի, այն ատեն դո՛ւք,
գո՛հ պիտի մնա՞ք ...

Նորե՛ն մեք կը հարցնենք

Նորե՛ն ինք կը պատասխանէ:

— Ամուսնացիր Ամբակում.

— Օ՛, օ՛, օ՛, ա՛, ա՛, ա՛, խնդրեմ հա-
ձեցէք լռել.

— Բայց ինչո՞ւ.

— Ինչու օ՞ր ... ես դեռ մեռնիլ չեմ
ուզեր ... ես դեռ ապրիլ կուզեմ բարեկա-
մըս.

— Ժանըմ քեզի մեռիւր ըսող չիկայ ես՝.

— Ծովը նետուէ ըսողը դուն չե՛ս.

— Ո՛հ, ես քեզի ամուսնացիր ըսի.

— Այսինքն ծովը նետուէ.

— Խնդրեմ բացատրէ.

— Ամուսնութիւնը ծով մըն է, վա՛յ,
նետուողին՝ որ լողալ չգիտեր, ես ալ լողալ
չեմ գիտեր, բայց կան մարդիկ որ լողալ
չգիտնալով հանդերձ կը լողան ... օգնու-
թեամբ:

— Հիմա հասկցայ ... է՛յ պռավօ.

— Մէռսի:

* * *

— Ամուսնութիւն բառը երբէք միտքէդ
չանցնի՛ր.

— Կանցնի՛, կանցնի՛, բայց այնքան ա-
րագ կանցնի որ, միտքիս չհանդիպիր.

— Թօհաֆ բան.

— Թօհաֆը մ'օհաֆը աս է, հօքրէս ռո-
գեկաւրֆի պէս ամուսնութեան գաղափարը
մտքիս կայարանին առջեւէն կանցնի՝ բայց
չհանդիպիր, ի՛նչ ըսիր.

— Ըսելիք չկայ, եաման մարդ ես եղեր
Ամբակում.

— Մէռսի:

ԱՆՄԵՌՈՒԿ

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ

Ի՛նչ որ տունէն ներս է՝ ընտանեկան է,
ինչ որ ընտանեկան՝ բարոյական, և ինչ որ
բարոյական է՝ ամենուն ՊէՏֆը:

Քասիմ՝ Մանգուլմէ առաւօտեան հայա-
թերթին կարող և սիրուած խմբագրապետը,
իր ինքնատիպ կուռ ոճովը՝ այս անգամ հը-
րապարակ հանած է ամէն տունէ ներս մատ-
չելի և անհրաժեշտ հատորը՝ այնքան ակորժ
կ'ընծայէ ընթերցողին հատ մը ունենալ ի ձե-
ռին, մանաւանդ անոր մէջ դրուած սկզբնա-
տառերը՝ որոնք յատկապէս պատրաստուած
են Հանդէսիս աշխատակից Տեար Վ. Գրըգ-
ճըհանի կողմէ (Անմեռուկ), այսօր ձեռքէ
ձեռք կը խլուի ամէն դասակարգի ընթեր-
ցողներու կողմէ:

Քասիմի գնահատուած անունը միայն գը-
րաւականն է գործին աղնուութեան, գեղեց-
կութեան և ընտանեկան կրկնակ առաւելու-
թիւններուն համար:

Տունէն ներս, ուրեմն ընդունեցէք միմի-
այն ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹԵՒԱԾՈՂ ԹՈՂՈՒՆՆԵՐԸ
ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՄԱԳՐԻ-ԳԻԻԴ. — Անցեալ կերակի գի-
շերուան թատրոնի մասնախմբին Նարը-գա-
բուցի մէկ անդամէն կը խնդրուի քիչ մը ա-
ւելի կենցաղագէտ ըլլալ՝ և մանաւանդ չվի-
րաւորել՝ լոկ հանրային հաստատութեան մը
նպաստաւորելու նպատակով տոմսակ գնող
յարգելի անձնաւորութիւններ: (Հրամանք
քանի՞ փարա տուիր բարեկամ, չօրպատա
մայտանոս... մե՛ղք... ափսո՛ս... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Շագեկառքին մէջ իրար կզող
նշանածներուն վրայօք բան մը իմացա՞ք,
յաջորդ անգամ մանրամասնաբար պիտի պատ-
մեմ, տեղ պահեցէք: (Լաւ. Ծ. Խ.):


ԳՈՒՄ-ԳԱՌՈՒ (Ռեսք). — Մի անգամ
ընդ միշտ կը խրատենք Ղալաթիոյ Եռաձայնի
խումբէն՝ Պ. Ակոսարզոցեանի թէ՛ ի դիմաց
Եռաձայնի Տնօրէն ժողովոյ, ամէնուն նամակ
չգրէ զանոնք Եռաձայնի խումբին անդա-
մակցութեան կոչելով, և կամ թէ հրաժա-
րեցնելով: (Զիլինկիրեան հո՞ս ես, Ս. Ա.
հո՞ս ես, եթէ զբաղած է՛ք, մենք սիրով
չափը կուտանք. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻԻԴ. — Կը խնդրուի տեղացի
օրիորդէ մը որ «ցտեսութիւն» բառին նշա-
նակութիւնը սովորելու համար, Sept toursի
համալսարանը յաճախել հաճի:

ԲԱՆԿԱԼԹԻ. — Իբ սիրահարէն բաժնուած
տիվալ բանող օրիորդ մը գիշերները մինչեւ
ուշ ատեն քանդումով «ահ նէ իմիշ, կիզլի
սէվսա չէքմէք, աթէշտէն կէօմլէյիմիշ»
կերգէ կոր:

ՆՈՅՆ. — Մեռելոցին օրը գերեզմանա-
տան պարտէզը բանցեկով տուող Գուժ-գա-
բուցի պարոնին կը յանձնարարենք որ ուրիշ
առթիւ մէկ օրիորդի խօսք տայ, որպէս գի-
երկրորդն ալ չէշին դուռը մարս չըլլայ:

ՇԻՇԼԻ. — Մեծ գերեզմանատան մէջ
նոյն երկուշաբթի օրը այնչափ բազմութիւն
կար որ՝ մեռելները կարծես անհանգիստ ե-
ղած էին, սա պատճառաւ որ՝ մեծամասնու-
թիւնը գրեթէ սիրաբանութեամբ ժամանակ
կ'անցնէր:



Ահաւասիկ վեց թռչուններ՝ որոնք օդին մէջ կը
թռնան աստանդական: Պիտի կրնա՞ք զեօդել այդ
թռչուններն ու պակերին մէջ նշանակող հաստատու-
կան անկիւններուն խումբը՝ 73 հազարերորդամբ
տրամաշարիով երջանակի մը մէջ, այնպիսի՝ հարա-
բութեամբ մը որ ամբողջութեամբ կազմեն իրենք ե-
րաշափական կանոնաւոր ձեւ մը, նոյն երջանակին
մէջ սեղմուած լը՛ս լըման:

Մեր այս քիչ մը կնճռոտ՝ բայց հաճելի մըցումին
մասնակցել փափաքողները պէտք է որ նախապէս շըր-
ջանակը գծեն ուրիշ թուղթի մը վրայ. «Հանրագի-
տակ»ի այս էջէն մկրատեն սոյն պատկերը, ետեւի
կողմէն խեժ քսեն անոր զանազան կտորներուն եւ զայ-
նը փակցունեն գծած շրջանակնուն մէջ, վերեւ նը-
շանակուած պայմաններուն հարազատ հաւատարմու-
թեամբ:

Մինչեւ 15 օր ճիշտ լուծողը վիճակաւ պիտի ըս-
տանայ մառօքէն դրամապանակ մը կէս Օսմ. ոսկի ար-
ժողութեամբ:

ԱՐՍԷՆ ԼԻԻՔԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿՐՆԸ

«Այս մեկնութիւնը երբեք հաւանական չէ, վասն զի, զանգակին հնչած ատենէն երբ ծառան սենեակ եկած էր՝ երեք վայրկեան սահած էր, ուրեմն, այս միջոցին՝ պարտն ինկած էր դորգին վրայ, անկենդան և զանգակին կոճակէն հեռու: Կամ Պ. Տօթուա զանգակը հնչած էր կռիւի միջոցին, որ անկարելի է ինչու որ զանգակին ձայնը երկար տեւած էր և ընդմիջուած՝ և ոչ թէ ընդհատուած. կամ հնչած ըլլար առաջ, որ նոյնպէս անկարելի է, ինչու որ կռիւը, ոճիրը, հոգեւարքը և փախուստը տեղի ունեցած էր երեք վայրկեանի կարճ ժամանակամիջոցի մը մէջ:

«Հետեւաբար, մինակ, Անթուանէթ Պրէհաթը հնար էր հնչելու: Բայց այն ատեն՝ ո՞վ կարգիլէր իր զոհին մատէն աղամանդը վերցնելու և ինչու հնչած էր:

«Վերջապէս, երբորդ հարցում, ո՞րկէ փախուստ տուած է. կառապանը կը յայտարարէ որ, երբ ոստիկանատուն գացած էր, ինք էր որ բացած էր գաւիթին դռանը նիւքը, անկէ զատ ոճրին գիշերը անձրեւած էր, սակայն դուրսը, ապարանքին առջեւ գլխահող փոքրիկ պարտէզին թրջած աւազին վրայ՝ ու եւ է ոտքի հետք չկար:

«Այս պայմաններուն մէջ, զժուար է նախատեսել եւքը որ պիտի կրնայ երեւան բերել ոստիկանութիւնը: Միակ ստուգութիւնը սա է որ ոճիրը գործուած է Անթուանէթ Պրէհաթի կողմէ, բայց ո՞վ է այս Անթուանէթ Պրէհաթը. տասը օր կար որ, ներկայացուած էր քոյր Օկիւսթի, որ վստահելով անոր հաճելի կերպարանքին և շնորհքով խօսուածքին, պարոնին ծառայութեանը առած էր:

«Այն սենեակէն ուր կը բնակէր Օր.Պ. . . , Ա. Պ. մարքայով ճերմակեղէններ գտան: Երկու պարեգօտներ և գլխարկ մը լուվրէն գնուած, բաւական մը բոմաններ, մեծամաս-

նութիւնը փրանսերէն, քանի մը հատը Անգլիերէն, Գերմաներէն և Սպանեօլերէն և չթարգմանուած, բայց ոչ իսկ թղթի կտոր մը:

«Ահա այս է համառօտակի պատմուած՝ Հանրի-Մարթէն ծառուղիին ոճիրը:

* * *

Պարոն Տօթուաի ժառանգորդները, ասանկ ուէքլամէ մը կը նպաստաւորուէին: Հանրի-Մարթէն ծառուղին, նոյն բնակարանին մէջ, ոճիրին վայրը, առարկաներու ու կարասիներու ցուցադրութիւն մը կազմակերպեցին, որոնք Տրուօթի սրահին մէջ աճուրդով պիտի ծախուէին: Նորարուեստ կարասիներ և միջակ ճաշակով առարկաներ գեղարուեստական և անգին, ամէն կողմ տարածուած էր, բայց սենեակին կեդրոնը, նոսնագոյն թաւիչով մը պատած և ապակիէ գունդով մը պաշտպանուած պատուանդանի մը վրայ, կը շողշողար կապոյտ աղամանդով մատանին՝ երկու ոստիկաններէ պահպանուած:

Սքանչելի աղամանդ մըն էր, անբաղդատելի յստակութեամբ մը, և այն անորոշ կապոյտով որ յստակ ջուրը ունի, այն կապոյտով՝ որ մաքուր ճերմակեղէնի մէջ կը նշմարուի: Կը հիանային, կ'սքանչանային և սոսկումով կը նայէին զոհին սենեակը, այն տեղը ուր դիակը տարածուեր էր: Եւ մանաւանդ պատերը, այն անանցանելի պատերը, որոնց մէջէն անցած էր ոճրագործը, հսկայ ծակեր կերեւակայէին, ստորերկրեայ բերաններ, կոյուղիներ՝ որոնք գետնափորներու հետ հաղորդակցութիւն ունէին:

Կապոյտ աղամանդին վաճառումը 30 ֆունտարին տեղի ունեցաւ, բաղմութիւնը ողողած էր սրահը և գին բարձրացնողներու տենդը մինչեւ խեղկատակութեան բարձրացաւ:

Հոն կը գտնուէր ամբողջ Բարիզը, անոնք որոնք կը գնէին և անոնք որոնք կարծել կուտան թէ կրնան իրենք ալ գնել: Դրամատէր-

ներ, արդիսդներ, ամէն տեսակ կիներ, իտա-
լացի քեցոն մը, բարձր անձնաւորութիւն մը,
որ իր վարկը հաստատելու համար մինչեւ
հարիւր հազար ֆրանքի հասցուց աղաման-
դին գինը, իտալացի քեցոնը հարիւր յիսուն
հազար ըսաւ և ֆրանսացի մը՝ հարիւր եօ-
թանասունը հինգ, ուրիշ անձ մը՝ երկու հա-
րիւր հազար ֆրանքի բարձրացուց: Երկու
հարիւր հազար ֆրանք հասնելուն՝ ամաքեօն-
ները վհատեցան: Երկու հարիւր յիսուն հա-
զարին, երկու հոգի միայն մնաց, Հէրշման՝
անուանի դրամատէրը, և Կոզօնի կոմսու-
հին՝ ամենահարուստ Սպանիացին, որուն ա-
ղամանդի և թանկագին քարերու հաւաքա-
ծունեքը անուանի և համբաւաւոր է:

— Երկու հարիւր վաթսուն հազար ...
երկու հարիւր եօթանասուն հազար ... եօ-
թանասունը հինգ ... ութսուն հազար գո-
չեց աճուրդի վերակացուն, յաջորդաբար նայ-
ուածքով հարցափորձելով երկու մրցակիցնե-
րը: Երկու հարիւր ութսուն հազար տիկինին
համար, մարդ չկայ աւելցնող:

— Երեք հարիւր հազար միմօաց Հէրշ-
ման:

Լուսթիւն մը: Ամէն մարդ Կոզօնի կոմ-
սուհին կը դիտէին: Ոտքի վրայ կայնած էր
նէ, դէմքը ժպտուն բայց դժգոյն՝ որ իր
յուզումը կը յայտնէր, իր առջեւը գտնուած
աթոռի մը յենարանին կոթնած էր: Իրապէս,
ինք գիտէր ինչպէս նաև բոլոր հոն գտնուող-
ները թէ՛ աճուրդի մենամարտին ելքը անու-
րոշ չէր, տրամաբանօրէն, ճակատագրակա-
նապէս, դրամատէրին ի նպաստ պիտի վեր-
ջանար, որուն քմահաճոյքները՝ կէս միլեառէ
աւելի հարստութեան մը կը ծառայէին:

Բայց և այնպէս կոմսուհին աւելցուց:

— Երեք հարիւր հինգ հազար:

Լուսթիւն մը եւս, ամէնքը դարձան դէ-
պի դրամատէրին, անոր անխուսափելի գնա-
ւելումին սպասելով: Ստոյգ էր որ պիտի
արտասանէր ուժով, կրքոտ և վերջնական:

Չարտասանուեցաւ ընաւ: Հէրշման անըզ-
գայ կեցեր էր, աչքերը թղթի կտորի մը վը-
րայ յարած՝ որ աջ ձեռքը բռնած էր, մինչ
միւս ձեռքին մէջ պատռուած պահարանի մը
կտորները կային:

— Երեք հարիւր հինգ հազար, կը կրկնէր

վերակացուն, մէկ ... երկու: Հէրշման ձայն
չհանեց: Մուրճը իջաւ:

— Չորս հարիւր հազար, աղաղակեց Հէրշ-
ման յանկարծ, իբր թէ մուրճին հարուածը
իր թմրութենէն արթնցուցած էր:

Շատ ուշ էր:

Շուրջը բոլորեցին, ինչ անցեր էր, ինչ ու-
աւելի կանուխ չէր խօսած:

Սկսաւ խնդալ:

— Ինչ անցաւ, իրաւ որ չեմ գիտեր,
անշարժութեան վայրկեան մը ունեցայ:

— Եւ այս կարելի՞ է:

— Բայց այո՛, նամակ մը որ ինծի տրուե-
ցաւ և պահ մը չփոթեց զիս:

ԿԱՆԻՄԱՐՏ հոն էր, մատանիին աճուր-
դին ներկայ էր: Մօտեցաւ ծառաներէն մէ-
կուն:

— Դո՛ւք էք, անկասկած՝ որ Պ. Հէրշ-
մանի նամակ մը տուիք:

— Այո՛:

— Որո՞ւ կողմէն:

— Կնոջ մը կողմէ:

— Ո՛ւր է:

— Ո՛ւր է՝, ահա պարոն հոն, սա կինը
որ թանձր քօղ մը ունի:

— Եւ որ կերթայ կոր:

— Այո՛:

Կանիմարտ յառաջացաւ դէպի դուռը և
նշմարեց կինը՝ որ սանդուխներէն վար կիջ-
նէր: Վազեց: Մարդերու բազմութիւն մը
դռանը մօտը խուժեց: Դուրսը, կինը չգտաւ:
Կանիմարտ սրահ վերադարձաւ, Հէրշմանի մօ-
տեցաւ, ինքզինքը ճանչցուց և տեղիկութիւն
ուղեց նամակին վրայ: Հէրշման նամակը ա-
նոր տուաւ: Աճապարանքով և մատիտով
գրուած գիրով մը՝ որ դրամատէրը չէր ճանչ-
նար, հետեւեալ բառերը կը պարունակէր:

«Կապոյտ աղամանդը դժբաղդութիւն կը
բերէ, յիշեցե՛ք պարոն s'Oproul»:

* * *

Վեց ամիս ետքը Բիքասիի մէջ, Կրօզօնի
դղեակէն, կոմսուհիէն կապոյտ աղամանդով
մատանին կը գողցուէր:

Ամիսփինք այս հետաքրքրական գործը,
որուն ամէն սրտայոյզ և զուարճալի մանրա-
մասնութիւններուն հետեւեցանք և որուն
վրայ ինծի վերջապէս պարտ է լոյս սփռել:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱԴԱՏՈՒՆ

ԼԱՆԳՆԵՐԻ ԶԵՆՈՒԹՅԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԼՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԵՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հատան, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փոքրիմ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմացէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 ղրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50 — 6



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք

ՊՓՈՒԹԱՑԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղայ պէջ խանին
եակ

Թէ.յի մեծ վաճառատան թէյերը,
որը ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զինասասնէ, Հեղկասասնէ, Ճալաս եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարհային:

ԿՈՒՉԷ՛Ք ՄՏԱՆԱԼ ԶԵՐ ՈՒԶԱԾԸ ՓՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՎ ՈՒ ԱՆՍԽԱԼ

ՅՈՒՅՈՐԿԸ ՄՕՏԵՆԱԼ

ԳՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՄ ԶԵՆՈՒԹՅԱՆ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐԵԱՔ ՊԼՏՐԱՍՏ ՈՒՆԵՆԱԼ

ԳՐԱՐԱՆԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԳՐԱՐԱՐՔԷՐՈՒ՝ ՈՐՈՖ ՎԱԵՐԱՐԱՆԱԾ
ՐԱՆ ՊԱՏ. ՌԱՄԸ. ԽՈՐՀԻՆ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՏԱԿԱՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ՝ ՈՐՈՖ ՐԱՆ
ՎԿԱԵԱԼ, ՎԱՐԿԵՏ ՈՒ ՎԱՐԱՌՈՒ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ՁԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՈՐԾԻ ԵՒ ՆԻԹԵՐՈՒ՝
ՈՐՈՖ ԳՆԱԿԱՆ ՐԱՆ ՈՒ ՏԵՍԱԿՈՎ ՐԱՆԱԳՈՅՆ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԹԵՐՈՒ. ԲՈՒԽՔ, ԳՐԻՉ, ԱԵԼԱՆ,
ԿԱՊԱՆԱՐ, ԱՄԱՏԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԲԻՉ, ԲԱՐԵՍԱԽՍԱԿ,
ԿԱԻԺ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷՒ Է ԳՈՐԾ՝ Ի ՄԸ. ՎԿԱԵԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱՐԱՅՈՅ, ԲԱ-
ՐԵՆԻԷ, ՎԱՏԱՌԱՆԻԷ, ԱՅԳԱՐԱՐ, ԵՐԱՐԵՐԱԿԱՆ, ՄԱՆԱԿԱՐԱՆԱ
ՎԱՐԱՐԱՆ ԵՆ: Ինչ որ ալ ՐԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ. ԲՈՒԽՔ, ԳՐԻՉ, ԱԵԼԱՆ,
ԿԱՊԱՆԱՐ, ԱՄԱՏԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԲԻՉ, ԲԱՐԵՍԱԽՍԱԿ,
ԿԱԻԺ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆ: ԿԱՆԱԿԱՆ
ՎԱՐԱՆ ՐԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ. ԲՈՒԽՔ, ԳՐԻՉ, ԱԵԼԱՆ, ԿԱՊԱՆԱՐ,
ԱՄԱՏԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԲԻՉ, ԲԱՐԵՍԱԽՍԱԿ, ԿԱԻԺ,
ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆ: ԿԱՆԱԿԱՆ ՎԱՐԱՆ
ՐԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ. ԲՈՒԽՔ, ԳՐԻՉ, ԱԵԼԱՆ, ԿԱՊԱՆԱՐ, ԱՄԱՏԻՏ,
ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԲԻՉ, ԲԱՐԵՍԱԽՍԱԿ, ԿԱԻԺ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԵՐ ԵՆ:

Հարցոցէ՛ք ու անմիջապէս պիտի պատասխանուի
այսպէս: ու պիտի ստանա՛ք օրը օրի

ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԶԵՂԶՈՎ

ԿԱՆԵԿ ԳՈՐԾԱՌՈՒՆԻԹԻՒՆ

ԴԻՄԵՑԷ՛Ք Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՄԱՆԵԱՆ ԽԱՆ ՕԶԱՆՆԵՍ ԷՍԿԻԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Յ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
15000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խստա, ամերիգան, պասմա, ևայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և ըն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԷՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՋՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՃ ԹԻԻ 13

50—45

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասը-գիւղ, Մէօհիւրսաւ
նաւիստի.

Յոգ Տարեօրացի

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական քանդակներու ծանօթութիւններէ զտու, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօս-

տեղաւարտութեամբ (բռարիֆ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնադրութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զուլթակ: Գիշերօթիկները կը վաղեմէն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսուհին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5 էն 9 զիմեով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նորխան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտութեանց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-ՏԵՐԿԵՆ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ